

<<Արտաշատի ԲԿ >> ՓԲԸ-ի կարիքների **համար** ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ քաղաքի պոլիկլինիկայի» շենքային պայմանների բարելավման, վերակառուցման և վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

**ձեռքբերման կատարման
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ - 2020/19 -1**

բ. Արտաշատ

15 08 2020 թ.

<<Արտաշատի ԲԿ >> ՓԲԸ-ը ի դեմս Հայկ Համբարձումյան-ի, որը գործում է <<Արտաշատի ԲԿ >> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Մաստարա >> Ա/Կ-ը, ի դեմս տնօրեն Ա. Ալեքսանյան-ի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ անանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **7800000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**¹⁹

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)** տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի **0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կատարողը զրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:²³

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:²⁴

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին: 7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

<ԱՐՏԱՇԱՏԻ ԲԿ>ՓԲԸ

<ՄԱՍՏԱՐԱ>Ա/Կ

Ք.Արտաշատ, Ա.Խաչատրյան 116

Ք.Գորիս, Ա.Բակունցի 66

Հ/Հ-163098222223

Հ/Հ-247570022779

ՀԷԲ Արտաշատի

ԱՇԻԲ ՓԲԸ Գորիսի մ/ճ

ՀՎՀՀ-04220707

ՀՎՀՀ-09203764

Հ.Համբարձումյան

Ա.Ալեքսանյան



(ստորագրություն)

Կ.Տ.



Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Կատարման
(նախատեսվող) աշխատանքների
համառոտ բնութագրիչը

Նախատեսվում է

Նախագծման ենթակա պրոյեկտների 2 ենթը տեղակայված է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքում, Արամ Նաչատրյան 116 հասցեում, հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 4420 քմ :

- Պրոյեկտների մասնաշենքեր 1499,8 քմ: տաք-դիսպանսեր 110,1 քմ և պահեստային մաս 34,2 քմ:

Ըստ ակտիվացման օրենսդրության պրոյեկտների մասնաշենքերի գերակշիռ մասը անմիջապես վիճակում է, իրականացվել են մասնակի ընթացիկ նորոգման աշխատանքներ, առանց վերականգնման օբյեկտների միջոցառումների՝ ծավալահատակագծային լուծումները չեն համապատասխանում արդի նորմատիվ պահանջներին, ուստի ենթակա են ամբողջական վերակառուցման (սելեկտիվացման) փորձարկման) և/կամ ապանոստեման:

- Չեղբերված եզրակացության արդյունքներով և գրություն ունեցող շենքային վնասվածության և/կամ ֆիզիկական մաշվածության օբյեկտների հիման վրա ներկայացնել վերլուծական նյութեր ծախսերի խաշարացված հաշվարկների՝ այլնորմաբախի լուծումների (կազմաբանուման, վերակառուցման կամ նորի կառուցման նպատակահարմարության) համարման և նախատեսվող աշխատանքների հիմնավորման համար:

Նախագծային լուծումների շրջանակներում նախատեսել՝

- Նախատեսել շուրջ 300 տեղ հզորությամբ պրոյեկտների 2 ենթի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ, Հաշվի առնելով օբյեկտի տեղակայման ռելիեֆը և տարածքի առանձնահատկությունները, որպես երկետային տվյալ կամ ուղեցույց կարելի է օգտագործել ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի ,, Գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա լինողները հաստատելու մասին ,, որոշումը:

- նախագծով նախատեսել ներքին պատերի տեղափոխում/առանց վնասելու և տեղաշարժելու կրող

- կոնստրուկցիաներն ու պատերը/ ստեղծել լրացուցիչ աշխատանքակներ, կազմակերպել օդափոխություն և օդորակման, հակաֆոնային ազդանշանման, հիդրանտների կառուցմանը/ընթացիկման, տեխնիկական, կապի, ջրահեռացում/ համակարգերի կառուցում, մասնաշենքի արդիական ներքին հարդարում,

- նախագծով նախատեսել մասնաշենքի համալրում հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող սննանց մտչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թերահարթակներ, առանձնացված սանհանգույցներ, բացօթյա լուսավորություն, ըստ անհրաժեշտության (եթե շենքը երկու և ավելի հարկայնությամբ է) վերին սարքեր կամ վերելակ (համապատասխան նորմատիվ փաստաթղթերով նախատեսվող այլ միջոցառումներ),

- նախագծով նախատեսել տարածքի բարեկարգում, կանաչապատում և լուսավորություն, ըստ անհրաժեշտության (եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն վերակառուցման կամ ապանոստեման) կառուցել-վերակառուցել արտաքին հարդարակցողիներ և այլն (բաշխիչ կայաններ, ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարարման, կոյուրու, ջրահեռացման ապահովման սարքեր-սարքավորումներ) ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով:

- համայնքին բնորոշ բնակիչական պայմանների հաշվառմամբ՝ նախատեսել այլնորմաբախի ենթհիմքի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար (առանձին նախահաշվով)

- նախագծման ընթացիկ աշխատանքները աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մտեցումներ:

Վերակառուցվող և կառուցվող հաստատություններում-մասնաշենքերում նախատեսվում են

Վերանորոգել ռենգեն կարիները

	<p>Ստեղծել մանկավարժային սենյակ</p> <p>Առաջին հարվում կառուցել դիտումների սենյակ (այցելուների առաջին ստուգում)</p> <p>Գոյություն ունեցող մուտքի վերանորոգում, որը կապատարկի երեխաներին, պատկաստման սենյակ մտնելարուն</p> <p>Տուբերկուլոզային մասնաշենքի վերանորոգում և շենքում սանհանգույցի կառուցում</p> <p>Մանկական մասնաշենքին կից թափոնների սենյակի վերանորոգում և շենքում ջրամատակարարման ու կոյուրու կառուցում</p> <p>Պոլիկլինիկայի շենքի ներսում հիդրանտների ցանցի կառուցում</p> <p>Օդափոխության համակարգի կառուցում</p> <p>Ջրամատակարարման ցանցի վերանորոգում</p> <p>Ջեռուցման համակարգի անցկացում</p> <p>Դռների, պատուհանների և հատակների փոխարինում նորով</p> <p>Պահեստային մասի վերանորոգում</p> <p>Տարածքի սափալստապատում</p> <p>Տարածքի բարեկարգում</p> <p>Տարածքի լուսավորություն</p> <p>Ջրի տեղերվուար, հրշեջաշիջման համար</p> <p>Բակի տարածքում ցայտալլույրի կառուցում</p> <p>Նախատեսվում է մշակել նախագծամախանաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.</p> <p>Գոյություն ունեցող պոլիկլինիկայի շենքի (մինչև 300 այցելու տեղով) վերակառուցման աշխատանքների նախագիծ, սեյսմիկ անվտանգության տեխնիկական միջոցառումների կիրառամամբ:</p> <ul style="list-style-type: none"> • Ըստ անհրաժեշտության, նաև գոյություն ունեցող շենք-շինությունների բանդման աշխատանքների նախագիծ • Ենթակայանի կառուցման նախագիծ՝ ըստ անհրաժեշտության, /հիմք ընդունելով նոր տեխնիկական միճակի եզրակացությունը/
<p>Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ</p>	<p>Հիմնավորում՝</p> <p>ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 4-ի թիվ 878 –Ն որոշում</p> <p>Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝</p> <ul style="list-style-type: none"> - ճարտարապետանախագծային առաջարկներ (-ներ) և տեխնիկական պայմաններ, - շենքերի և շինությունների համար ձեռք բերված տեխնիկական փճակի մասին եզրակացությունները - արտաքին հատրդակցողիների տեխնիկական փճակի եզրակացություն - ինժեներական և անհրաժեշտության դեպքում երկրաբանական հետազննության եզրակացություն(-ներ), - նախագծային առաջարկներ (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մտանկցությունով և հաստատմամբ), - հանույթ, - չափագրություններ, - որոշումային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսի անհրաժեշտ են (շրջակա միջավայր, մշակույթ): <p>Նախագծի մշակումը ըստ նորմատիվային պահանջների՝</p>

- ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. <ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի սրամտորման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի <ՀՀՀՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N263-Ն հրաման,
- ՀՀ կառավարության 13.12.2007թ. <ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինման ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նկատմամբ նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ. N 532 և 03.05.2001թ. որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 1490-Ն որոշում,
- ՀՀՀՆ 20-06-2014 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերակազմում և ուժեղացում> շինական դրույթներ՝ Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001թ. N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին>, ՀՀ քաղաքաշինության նախարարի 24.03.2014թ. թիվ 87-Ն հրաման,
- ՄԱԿԴ 2.08.02-89 <Հասարակական շենքեր և շինություններ (այդ թվում <Актуализированная редакция>),
- ՀՀ ԳԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ. <Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մտահոլության սպառնալուծման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին> թիվ 43-Ա հրաման,
- ՀՀ առողջապահության նախարարի 28.03.2017 թվականի <Հանրակրթական ծրարեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ> N 2.2.4-016-17 սահմարական կանոնները և նորմերը հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 12-Ն հրաման,
- ՀՀ կառավարության 16.02.2006թ. թիվ 392-Ն որ. <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, արանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մտահոլության սպառնալուծման կարգը հաստատելու մասին>.
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ. թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՀՆ II-6.02-2006 <Մեյսակարյուն շինարարության նախագծման նորմեր>.
- ՀՕ-110-Ն, 21.06.2014թ. <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք.
- ՀՀ կառավարության 04.05.2017թ. <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 526-Ն որոշման նախագի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ
- ՀՀ կառավարության 25.12.2014թ. թիվ 1504-Ն որ. <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորագլուխ) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին>:

Նախագծման փուլերը

Նախագծման փուլերը կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների սպառնալուծում

ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ. N128-Ն հրամանի համաձայն
 Նախագծային աշխատանքների իրականացում «Աշխատանքային Նախագիծ» — 1 — (մեկ) փուլով

Էզրակացություններ

Նախաձեռնախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում 1. Նախաձեռնողի կողմից ինժեներակիրաբանական հետազոտության եզրակացությունների և տեխնիկական պայմանների ձեռքբերում, ընդ որում ինժեներակիրաբանական ուսումնասիրությունները պետք է իրականացվեն հորատման միջոցով՝ համաձայն գործող կարգերի և գրանտների լայնարատ փորձարկման միջոցով

2. Նախաձեռնողի կողմից գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացության ձեռքբերում, և նախաձեռնողի լուծումների ընտրության տեխնիկատնտեսական էինմալիրում

- 3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասով մասնագիտական եզրակացության ձեռքբերում՝ ըստ անհրաժեշտության

Փորձաքննություններ

- որպես բարձր տիպայության (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտ նախաձեռնախահաշվային փաստաթղթերի մշակման համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում քաղաքաշինական (պարզ) փորձաքննության եզրակացության ձեռքբերում՝ Նախաձեռնողի կողմից

Պետական համալիր փորձաքննության ապահովում՝ Պատվիրատուի (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի) նախաձեռնությամբ, որոշմամբ

Չինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ

- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ
 - նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ
 - էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ
- Նախաձեռնող օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող էինմալական տեխնիկական ցուցանիշները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ, ՆԱԽԱԳՐԻ ԼՐԱԿԱԶՄ

Նախաձեռնախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:

Նախաձեռնախահաշվային փաստաթղթերի հոնքատային և գծագրական նյութերի, նախահաշվի/ առթողական փաթեթի ներկայացում 3 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային, AUTO CAD և PDF, նախահաշվի, EXCEL տարբերակներով, երկնգու՝ հայերեն և ռուսերեն:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺՄԱԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)

Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից՝ 110-րդ օրացուցային օրը, ներառյալ քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացության ձեռքբերումը, որից հետո ՆԱՓ-ի Պատվիրատուի նախաձեռնությամբ կներկայացվի պետական համալիր փորձաքննություն:

ՆԱԽԱԳՐԻ ԼՐԱԿԱԶՄԸ

Ըստ անհրաժեշտության (եթե համալիր (այդ թվում պարզ) փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»), նախաձեռնախահաշվային փաստաթղթերի լրամշակման իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊՆՉՈՒՄ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<ԱՐՏԱՇԱՏԻ ԲԿ>ՓԲԸ

Ք. Արտաշատ, Ա. Խաչատրյան 116

Հ/Հ-163098222223

ՀԷԲ Արտաշատի

ՀԿՀՀ-04220707

Հ. Համբարձումյան

/խորագրություն/ Կ.Տ.



ԿԱՏԱՌՈՂ

<ՄԱՏԱՄԱՐԱ>Ա/Կ

Ք. Գորիս, Ա. Բակունցի 66

Հ/Հ-247570022779

ԱՇԽԲ ՓԲԸ Գորիսի մ/ճ

ՀԿՀՀ-09203764

Ա. Ալեքսանյան



(տարագրություն)

Կ.Տ.



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Կրթական հաստատության անվանումը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի											Ընդամենը			
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր		նոյեմբեր	դեկտեմբեր	
1	ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ քաղաքի պոլիկլինիկայի» շենքային պայմանների բարելավման, վերակառուցման և վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների		0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	7800000	7800000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

<ԱՐՏԱՇԱՏԻ ԲԿ>ՓԲԸ
 Զ.Արտաշատ, Ա.Խաչատրյան 116
 3/3-163098222223
 3ԷԲ Արտաշատի
 3433-04220707
 Զ.Համբարձումյան

<ՄԱՍՍԱՐԱ>Ա/Կ
 Զ.Գորիս, Ա.Բակունցի 66
 3/3-247570022779
 ԱՇԻԲ ՓԲԸ Գորիսի մ/ճ
 3433-09203764
 Ա.Ալեքսանյան

/ստորագրություն/
 Կ.Տ.



(ստորագրություն)
 Կ.Տ.

